



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴՎՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գեղարքունիքի մարզ
գ. Բերդկունք
Էլ. փոստ berdkunq.gegharquniq@mta.gov.am

«05» դեկտեմբերի 2019 թ.

ԲԵՐՎՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ 19

2019թվականի թիվ 6-Նիստի

2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ, 19-րդ և 20-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ, 11-րդ հոդվածի կետերը և 12-րդ հոդվածի 1-ին կետի ա/,գ/ ենթակետի, 3-րդ, 6-րդ, 12-րդ կետի բ/ ենթակետի ու աղբահանության և սանիտարական մաքրման մասին օրենքի պահանջները՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Բերդկունք համայնքի 2020թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը.

1.1/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200ք/մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տաս հազար ՀՀ դրամ:

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար ՀՀ դրամ

դ/ 20 և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար ՀՀ դրամ